



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 125-Ն

Արթիկ համայնք  
թվական

24 հունիսի 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԴԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ  
ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի առաջարկությամբ բաց աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող թեթև մարդատար ավտոմեքենաները և հիմք ընդունելով «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» սահմանփակ պատասխանատվությամբ ընկերության յուրաքանչյուր ավտոմեքենայի գնահատման համապատասխան հաշվետվությունները՝ հաստատել մեքենաների օտարման մեկնարակային գները համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել աճուրդի կանոնակարգը և աճուրդի մասին հրապարակային ծանուցման հայտարարության տեքստը համաձայն թիվ 2 և թիվ 3 հավելվածների:

3. Աճուրդը կազմակերպելու նպատակով՝

1) ստեղծել աճուրդային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) հետևյալ անհատական կազմով՝

ա. Անանիկ Ոսկանյան - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար,

բ. Արա Սուքիասյան - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

գ. Վարդան Մակեյան - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ղեկավարի տեղակալ

դ. Արկադի Թադևոսյան - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող

ե. Յուլյա Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի խորհրդական

զ. Տաթևիկ Զարյան - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի լիազորություններն ու գործառույթները կատարող

է. Վարդուհի Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամ

ը. Ոսկան Վարդանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Միասնական Արթիկ» խմբակցության ավագանու անդամ

թ. Հովհաննես Սահակյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Հանուն Հանրապետության» խմբակցության ավագանու անդամ  
 Ժ. Արտակ Հարությունյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Ազատական կուսակցություն» խմբակցության ավագանու անդամ  
 ի. Հակոբ Մաթիլյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Դաշնակցություն» խմբակցության ավագանու անդամ  
 լ. Արթուր Աստոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու «Ապրելու երկիր» խմբակցության ավագանու անդամ

2) Աճուրդավար նշանակել հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի խորհրդական Յուլյա Հովհաննիսյանին, իսկ արձանագրող՝ հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի լիազորություններն ու գործառույթները կատարող Տաթևիկ Չարչյանին:

3. <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հանձնաժողովին վերապահել հրապարակային սակարկություն կազմակերպելու լիազորություն (աճուրդի կազմակերպիչ):

Ավագանու անդամներ  
**Կողմ (21)**  
 Ոսկանյան  
 Աղրամանյան  
 Բաղդասարյան  
 Գևորգյան  
 Հովհաննիսյան  
 Պետրոսյան  
 Գևորգյան  
 Պետրոսյան  
 Չարչյան  
 Հարությունյան  
 Տոնոյան  
 Վարդանյան  
 Սահակյան  
 Հաջաթյան  
 Մինասյան  
 Ռափյան  
 Վարդանյան  
 Մկրտչյան  
 Վարազյան  
 Աստոյան  
 Ասատրյան

**Դեմ (0)**

**Ձեռնպահ (0)**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

